ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015 Թ N 44 -Ն

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ ՀՀ կառավարության 2015 թ նոյեմբերի 19-ի N 1361-Ն որոշմամբ Ապարանի քաղաքային համայնքին հատկացվել է 15.806,4 հազ. դրամ սուբվենցիա՝ ուժեղ քամիների հետևանքով համայնքին հասցված վնասների հետևանքները վերացնելու առաջնահերթ նպատակով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.11.2015 թ N 1361-Ն որոշման 3-րդ կետի պահանջը՝ սույն գործընթացի վրա ՀՀ կառավարության 10.02.2011 թ ,,Գնումների գործընթացի կազմակերպման մասին'' N 168-Ն որոշմանբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 20-րդ կետով սահմանված դրույթը չտարածելու վերաբերյալ, համաձայն ,,Գնումների մասին'' ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5/2 կետի պահանջների.

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Ապարանի քաղաքային համայնքի Նժդեհի 3, Բաղրամյան 12, 17 և 46 բազմաբնակարանային շենքերի տանիքների վերականգնման և վերանորոգման աշխատանքների գնման գործընթացը կազմակերպել բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:
2. Սույն որոշման պատասխանատվությունը դնել փոխքաղաքապետ Գ. Երեմյանի վրա:

Ավագանի՝ Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Հայկ Շմավոնյան
Հովհաննես Շահբազյան
Արսեն Պողոսյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան